№ 151 Սեպտեմբերի 7 (19) 1879 Սեպտեմբերի 7 (19) № 151

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք գրվում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պարսկահայերի օրինակը։—Ներքին տեսութիւն։ Նամակ Ալէքսանդրապօլից։ Նամակ Խմբագրին։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Բօսֆոր Հեղ։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։—Բանասիրական։ Ռուսի աքաղաղ։

ՊԱՐՍԿԱՀԱՅԵՐԻ ՕՐԻՆԱԿԸ

—

Մինչև որ մի ազգութեան մէջ ազգային ինքնաճանաչութիւն չը կայ,—պէտք է ազգի կրթված մասը աշխատի արուեստական կերպով զարթեցնել ազգի մէջ ինքնաճանաչութեան զգացմունքը։ Մինչև որ մի հասարակութիւն այնքան զարգացած չէ որ հասկանայ թէ պէտք է ընդհանուր հասարակական գումարներ հաւաքի և նուիրի յօգուտ մի որ և է հասարակական գործի կամ հիմնարկութեան,—պէտք է նոյն հասարակութեան ունևոր անդամները իրանց մասնաւոր միջոցների մի մասը նուիրեն յօգուտ ընդհանուր հասարակական գործի։ Մինչև որ մի տգէտ ազգի մէջ ուսուցչի, դեռատանի, քարոզչի, խմբագրի, հեղինակի պարապմունքը, անպէտք համարվելով, դեռ չէ վարձատրվում,—նոյն ազգի ունևոր և կրթված անդամները պէտք է յանձն առնեն անվարձ կատարել վերևյիշված, իւրաքանչիւր հասարակութեան մէջ ահրաժեշտ համարվող պաշտօններ։ Մինչև որ մի ժողովրդի մէջ ընթերցասիրութիւնը տարածված չէ,—ժողովրդի հասկացող և կարողութիւն ունեցող անձինք պէտք է չը խնայեն իրանց դրամական միջոցները իրանց հաշուով տպագրել գրքերը, իրանց հաշուով տարածել ժողովրդի մէջ գրքեր, լրագիրներ կամ ամսագիրներ....

Այդ բոլոր ճշմարտութիւնները, մենք հաւատացած էինք, դրժբաղդաբար ոչ մի հայ չէր հասկանում, մանաւանդ մեր Թիֆլիսցի հայերը երբէք չէին կարող հասկանալ այդ տեսակ պարզ ճշմարտութիւններ։ Այդ տեսակ բարձր, նուրբ, հասարակաշահ, օգտաւէտ, ազնիւ գաղափարների հասկանալը Թիֆլիսցի հայի խելքի բանը չէ....

Բայց յանկարծ մենք իմացանք որ այդ ճշմարտութիւնները հասկացան պարսկաստանցի մի քանի հայեր, որոնք գործով կամենում են ապացուցանել այդ գաղափարների գոնէ մասամբ իրագործելու հնարաւորութիւնը։

Մենք լսում ենք, որ Թիֆլիսում բնակվող մի քանի պարսկաստանցի հայեր, տեսնելով որքան զուրկ են ընթերցասիրութենից Պարսկաստանի իրանց հայրենակիցները, որքան դեռ աւելորդ են համարում նրանք կարդալ և փող ծախսել ընթերցանութեան վրա, վճռեցին իրանց մէջ մի յայտնի գումար հաւաքել և բաժանորդ գրվելով Անդրկովկասում հրատարակվող հայոց լրագիրներին և ամսագիրներին, յայտնի քանակութեամբ անվարձ տարածել այդ բոլոր պարբերական հրատարակութիւնները պարսկաստանցի հայերի մէջ....

Այդ տեսակ գործ, որ հիմնված է փոխադարձ համերաշխութեան և օգնութեան վրա, դեռ նոր և երբէք եղած չէ հայերի մէջ։ Մանաւանդ հրաշք պէտք է համարվի այդ տեսակ գործի մի հաստատ, կազմակերպված ընկերութեան միջոցով առաջ տանելը։

Թող ժողովուրդը առաջ ձրի ստանայ այս կամ այն հայոց թերթ, կամ հայոց ամսագիր,—իսկ ժամանակով ընտելանալով ընթերցանութեանը, ինքն կը գրվի....

Եւ արդեօք զարմանալի չէ, որ այն հասարակական գաղափարը, որ անկարող եղան հասկանալ, որի իրագործմանը անկարող եղան ձգտել Թիւրքիայի և Ռուսաստանի բոլոր հայերը,—նոյն գաղափարը ամենքից առաջ հասկացան և կամենում են իրագործել Պարսկաստանի հայերը։

Ուրեմն այժմ Պարսկաստանի հայերից օրինակ առնելու ենք։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

—

29 օգոստոսի

Ձեմ յիշում «Մշակի» որ համարում պ. Բաբաջանեանցը բացատրեց, որ Պետրոս քահանայ Մատնիչեանի մօտ գտանվում է 600 ռուբլի ընկերութեան փող։ Ընկերութիւնը վաղուց քանդվել է և յիշեալ գումարը տէր հօր զրպանին է ծառայում։ Զարմանալի բան է, որ տէր-Պետրոս հայրը մինչև հիմայ բոլորովին լռել և ոչինչ չէ ասում հրապարակաւ, որ տեսնենք թէ այդ փողերը ինչ է եղել։ Գուցէ պ. Բաբաջանեանցը սուտ է ասում, և այդպիսի ընկերութիւն չէ եղել Ալէքսանդրապօլում։ Ցէր հայր, մենք չատերի հետ սպասում ենք որ հրապարակաւ մի փոքրիկ բացատրվում էր մի օձ, որ ամեն գիշեր ածում էր իր բոյնի առջև սիստորի կճեպներ. տանտէրը հաւաքում էին պահում, և առաւօտեան տեսնում էին, որ բոլոր կճեպները զուտ ոսկի էին դարձել։ Մի անգամ տանտէրերից մէկը, որ յիմար էր, խփեց, կոտրեց օձի ձագերից մէկի պոչը. օձը բարկացաւ, էլ այնուհետև չերևեցաւ, նրանք զրկվեցան ոսկուց, և սկսեցին հետզհետէ աղքատանալ։

Տիկին Մարիամը և իր հիւրերը երկար խօսում էին այս տեսակ մնահաւատութիւնների վրա և գիշերը աննկատելի կերպով անցնում էր։ Յետոյ նրանք կրկին դարձան դէպի աղայի խորհրդաւոր մահը։

—Բայց ինչ ասաց բժիշկը, երբ միւս օրը եկաւ մարմինը քննեց, հարցրեց կնիկներից մէկը։

—Նա պատասխանեց, թէ կաթուածք է ստացել, պատասխանեց տ. Մարիամը։

—Հոգը նրանց գլխին, նրանք ինչ են հասկանում այս տեսակ բաները....

Է.

Միքայէլը, աւելի քան հինգ տարի բացակայ մնալով Մասիսեանների տնից, վերջապէս վերադարձաւ այստեղ։ Այս հինգ տարվայ ընթացքում նա գլխաւորապէս բնակվել էր Մոսկվայում, ամեն տարի ներկայ էր գտնվել Նիժնի-Նովգորոդի տօնավաճառին, և մի քանի անգամ գնացել էր Մարսելիա, որտեղից ճանապարհորդել էր զանազան եւրոպական քաղաքներ։

Նրա կրկին յայտնվելը Մասիսեանների տանը նոյնպիսի հետաքրքրութիւն չարժեց, որպէս եղաւ նրա առաջին յայտնվելու ժամանակ, երբ դեռ նոր էր բերված գիւղից։ Առաջ գիւղից նա եկաւ այստեղ գիւղական կոչումներով, որի ամեն մի խօսքը, ամեն մի չարժմունքը ծաղրածութեան առարկայ էր դառնում ամբողջ ընտանիքի համար,—

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՍԿԻ ԱՔԱՂԱՂ

(Երկրորդ մասը)

—

—Գիշերից բաւական անցել էր, ասաց նա,—Գայիանէն և Հռիփսիմէն վաղուց քնած էին. աղայի սենեակում ճրագ չէր երևում. նա էլ քնած էր. ես միայն մնացել էի անքուն, կարծես, մի բան, որը ինքս էլ չեմ իմանում թէ ինչ էր, խռովեցնում էր ինձ և անհանգիստ էր անում։ Աքաղաղները վաղուց սկսել էին կանչել, ես տակաւին նստած էի ճրագի մօտ և կարկանում էի նրա (աղայի) դուլբաները։ Յանկարծ լսում եմ նրա սենեակից մի խուլ ձայն, որ կրկնվեցաւ մի քանի անգամ։ Սերոս սկսեց դողդողալ և խկոյն վազեցի նրա մօտ։ Տեսնում եմ, խեղճը իր քնած տեղից դուրս է եկել և ընկել է թախտի վրա։ Նա սարսափելի խռովութեան մէջ էր։ Երբ ինձ տեսաւ, վերկացաւ, նստեց։ Ես զարհուրեցայ, երբ նկատեցի նրա դէմքը. բոլորովին փոխվել էր, այլանդակվել էր և մահուան դէմ էր ստացել, իսկ աչքերի մէջ վառվում էր ոսկալի կրակ։

—Տունս քանդվեցաւ... ձայն տուեց նա ողորմելի կերպով։

—Ինչ է պատահել, հարցրի ես սարսափելով, և մօտեցայ նրա ձեռքերը բռնեցի, որոնցով անխնայ ծեծում էր իր գլուխը և փետում էր մազերը։

Ես մտածեցի, թէ նա ցնորված պէտք է լինի. նրա բոլոր շարժմունքները, խօսքերը ցոյց էին տալիս, թէ այլ ևս չէ իշխում իր վրա։ Բայց շուտով հանգստացաւ և դարձեալ կրկնեց մի և նոյն խօսքերը.

—Մեր տունը քանդվեցաւ... մենք կորած ենք... և աչքերը ծածկեց ձեռքով, սկսեց լաց լինել։

—Ինչ կայ, ինչ է պատահել, մխիթարեցէք հարցնում եմ ես։

—Էլ ինչ պէտք է լինի, «ոսկի աքաղաղը» մեռաւ... պատասխանեց նա խորին տխրութեամբ։

—Ինչպէս թէ մեռաւ։

—Մեռաւ... իմ աչքով տեսայ»...

Ես դարձեալ մտածեցի, թէ խելքից գնացած պէտք է լինի, որովհետև այսպիսի ցնորքներ վերջին տարիներում շատ անգամ պատահում էին նրա հետ։

Ես փոքր ինչ հանգստացրի նրան, և խնդրեցի, որ պատմէ, թէ երբ տեսաւ, կամ ինչպէս մեռաւ «ոսկի աքաղաղը»։

Նա պատմեց, թէ տեսաւ, որ «ոսկի աքաղաղը» երևեցաւ նրան իր ոսկի հաւի հետ, իրանց ոսկի ճտերով. նրանք պտտում էին տան պարտէզի մէջ, թռթռում էին և զուարճանում։ Յանկարծ օդի միջից վրա հասան մի քանի ուրուրներ։ խեղճ հաւը իր աքաղաղի հետ երկար պատերազմում էին ուրուրների հետ, որ ազատեն իրանց ճտերը նրանց ճանկերից, բայց ազատել չը կարողացան. բոլորին յափշտակեցին, տարան, և ոսկի հաւը «ոսկի աքաղաղի» հետ պատառ-պատառ անելով, թողեցին, թռան, և կրկին անյայտացան ուրուրները օդի մէջ։

—Դու, երևի, երազ ես տեսել, պատասխանեցի ես, աշխատելով մխիթարել նրան։

—Երազ... երազը ո՞րն է... ես իմ աչքով տեսայ... և «ոսկի աքաղաղից» մնաց ինձ մի փետուր միայն... տես, տես, ինչպէս արիւնոտ է... դեռ արիւնը չէ ցամաքել....

Եւ նա ձեռքը մեկնեց դէպի ինձ, որպէս թէ ցոյց էր տալիս այն ոսկի փետուրը, որ մնացել էր նրան «ոսկի աքաղաղից», բայց ես նրա ձեռքում ոչինչ չը տեսայ։ Նոյն միջոցին կրկին տիրեց նրան սարսափելի խռովութիւն, կրկին նա ալեկոծութեան մէջ ընկաւ։ Յետոյ փոքր առ փոքր հանգստացաւ։ Յանկարծ դողդողաց ամբողջ մարմնով, երեսը կծկվեցաւ, աչքերը փակեց, «մեր տունը քանդվեցաւ»... կոչեց վերջին անգամ, թուլացաւ և ընկաւ գետնի վրա....

Տիկին Մարիամի պատմութիւնը սարսափ դցեց լսողների վրա, Գայիանէն և Հռիփսիմէն լաց էին լինում, և նրա հիւրերը նոյնպէս չը կարողացան զսպել իրանց արտասուքը։

—Ի՞նչ էր այդ «ոսկի աքաղաղը», հարցրեց նրանցից մէկը։

—Նա մեր տան բախտն էր, մեր բոլոր հարստութիւնը նրանից էր կախված, պատասխանեց տ. Մարիամը։

Տիկինը ոչ սակաւ մնահաւատ էր, քան թէ հանգուցեալ աղան. առհասարակ Մասիսեանների ամբողջ ընտանիքը հաւատում էր «ոսկի աքաղաղի» բարերար ազդեցութեանը, բացի Սահակից։

—Այդ իրաւ է, հաստատեց տիկնոջ խօսքը կընկերներից մէկը.—ամեն տան բախտը մի-մի բանի վրա հիմնված է լինում. երբ նա անհետանում է, բախտաւորութիւնն էլ իր հետ է տանում։ Ես ճանաչում եմ մեր քաղաքացիներից մէկին, որի համար պատմում էին, թէ նրա տան մէջ ընակվում էր մի օձ, որ ամեն գիշեր ածում էր իր բոյնի առջև սիստորի կճեպներ. տանտէրը հաւաքում էին պահում, և առաւօտեան տեսնում էին, որ բոլոր կճեպները զուտ ոսկի էին դարձել։ Մի անգամ տանտէրերից մէկը, որ յիմար էր, խփեց, կոտրեց օձի ձագերից մէկի պոչը. օձը բարկացաւ, էլ այնուհետև չերևեցաւ, նրանք զրկվեցան ոսկուց, և սկսեցին հետզհետէ աղքատանալ։

Տիկին Մարիամը և իր հիւրերը երկար խօսում էին այս տեսակ մնահաւատութիւնների վրա և գիշերը աննկատելի կերպով անցնում էր։ Յետոյ նրանք կրկին դարձան դէպի աղայի խորհրդաւոր մահը։

—Բայց ինչ ասաց բժիշկը, երբ միւս օրը եկաւ մարմինը քննեց, հարցրեց կնիկներից մէկը։

—Նա պատասխանեց, թէ կաթուածք է ստացել, պատասխանեց տ. Մարիամը։

—Հոգը նրանց գլխին, նրանք ինչ են հասկանում այս տեսակ բաները....

Է.

Միքայէլը, աւելի քան հինգ տարի բացակայ մնալով Մասիսեանների տնից, վերջապէս վերադարձաւ այստեղ։ Այս հինգ տարվայ ընթացքում նա գլխաւորապէս բնակվել էր Մոսկվայում, ամեն տարի ներկայ էր գտնվել Նիժնի-Նովգորոդի տօնավաճառին, և մի քանի անգամ գնացել էր Մարսելիա, որտեղից ճանապարհորդել էր զանազան եւրոպական քաղաքներ։

Նրա կրկին յայտնվելը Մասիսեանների տանը նոյնպիսի հետաքրքրութիւն չարժեց, որպէս եղաւ նրա առաջին յայտնվելու ժամանակ, երբ դեռ նոր էր բերված գիւղից։ Առաջ գիւղից նա եկաւ այստեղ գիւղական կոչումներով, որի ամեն մի խօսքը, ամեն մի չարժմունքը ծաղրածութեան առարկայ էր դառնում ամբողջ ընտանիքի համար,—

թիւն տաք թէ ձեզ մօտ որքան փող կայ, ձեր ընկերի մօտ որքան կայ և վերջապէս այդ գումարը, եթէ տապկացնելու միտք չունէք ինչի վրա պէտք է գործ դնէք և կամ եթէ մխսել էք, ցոյց տուէք տեղերը։ Եթէ ոչ, ինչ կը նշանակէ ժողովրդից փողեր հաւաքել, իր գրպանը դնել և լուռ ու մունջ անուշ անել։ Արդեօք գեր. առաջնորդի պարտականութիւնից դուրս բան է, կանչել տէր հօրը և բացատրութիւն պահանջել։ Եթէ տէր հայրը այս անգամ էլ կը լռի, այն ժամանակ մենք կը համոզուենք որ բոլոր գումարը «բարբառելով ճաշակեալ է և մի բաժակ ջուր էլ վրէն ընպեալ է։»

Աղէքսանդրապոլցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Բօստով, 20 օգոստոսի

Կարդալով ձեր պատուական լրագրի մէջ «Արարատեան ընկերութեան» հրաւէրը Հայաստանի թշուառ հայ մանուկների կրթութեան համար, յաջողեց ինձ տեղոյս փոքրաթիւ հայօտարականներից ժողովել յօգուտ նոյն ընկերութեան հանգանակութիւն, որոնք չը խնայեցին իրանց լումայի իւրաքանչիւրը իր կարողութեան չափ նուիրելով. ընդամենը գոյացաւ եօթանասուն հինգ ռուբ., որը ուղարկում եմ ձեզ խնդրելով որ ուղարկէք ուր հարկն է, և տպագրել ձեր պատուական լրագրի մէջ նուիրատուների ազգանունները միամտութիւն այլոց։ Եղբարք Մաղավուզեանց 25 ր., Գալուստ Անպետկեանց 3 ր., Սարգիս Զաքուրեանց 3 ր., Միխայէլ Սիպաքեանց 3 ր., Յարութիւն Թունեանց 5 ր. Խնամիր Վասանեանց 3 ր., յոյն Բանտալի Սուլիմանակի պօլսեցի 1 ր., Բաղալ Յովհաննեանց 10 ր., Ստեփան Աւետով 3 ր., Յակոբ Մաղաքեանց պօլսեցի 6 ր., Գառնիկ Նշանեան 1 ր., Գրիգոր Մեծարօվիչ 1 ր., Յովակիմ Պէկլերեանց 1 ր., Ստեփան Զաքարեանց 3, ր. Գէորգ Պալապանեանց նոր նախիջևանցի 1 ր., Հայ ոմն 1 ր., Կարապետ Զոհնեանց 5 ր., գումարն է 75 ր.։ Փոստի ծախքը վճարեցի ինձմէն։

Իվան Մաղավուզեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Ճամբարակ, 20 օգոստոսի

Ի մտի ունենալով «Արարատեան ընկերութեան» հրաւէրն Հայաստանի հայ թշուառ մանուկների կրթութեան համար ինձ յաջողեց բաց անել ստորագրութիւն և ժողովել Ճամբարակ գիւղում ներքոյ այժմ նա վերադառնալով եւրոպական քաղաքներից, բոլորովին ուրիշ մարդ էր դարձել, կրթված, տաշված և կոկված. այժմ նրա ամեն մի վարմունքը, ամեն մի խօսքը հրաւիրում էր իր վրա պատկառանք և համակրութիւն։

Այս հինգ տարվայ ընթացքում Մասիսեանների տան մէջ շատ բան փոխվել էր, ինչպէս փոխվել էր և ինքը՝ Միքայէլը։ Տիկին Մարիամը բաւական ծերացել էր. հոգսը, տխրութիւնը և տանջանքը բոլորովին մաշել էին նրան։ Գայիանէն այժմ նմանում էր կուսանոցի պառաւ ապաչխարողի, որին պակաս էին «տէրողորմեան» և սև հագուստը։ Իսկ Հռիփսիմէն աւելի ձևակերպվել էր, աւելի վայելչակազմ հասակ էր ստացել և աւելի գեղեցկացել էր։ Նրա մանկական յամառ կամապաշտութիւնը այժմ տեղի էր տուել խիստ նազելի և փափուկ բնաւորութեան։ Նա դտանվում էր այժմ այն բախտաւոր հասակում, որին կարելի էր սիրել և որից կարելի էր սիրվիլ։

Տան մէջ ոչինչ չէր փոխվել, ամեն ինչ դտանվում էր իր հին ձևի մէջ, ամեն ինչ իր տեղն էր. միայն մի բան պակաս էր, և դա էր—աղան։

Մի շաբաթ անցել էր, ինչ որ Միքայէլը հասել էր Ե... քաղաքը, և այս մի շաբաթում Մասիսեանների համար նա համարեա անկատելի մնաց։ Ամբողջ օրը զբաղված էր հանդուցեալ աղայի գործերով։ Առաւօտեան վաղ դուրս էր գնում և վերադառնում էր գիշերը շատ ուշ, բոլորովին յոգնած, և երբեմն այն աստիճան վրդովված, որ անկարելի էր նրա հետ խօսել կամ տեսնվել։ Նրա համար պատրաստել էին այն սենեակը, ուր մի ժամանակ բնակվում էր Ստեփանը։ Ամեն անգամ, երբ տուն էր դառնում նա տ. Մարիամը անհամբերութեամբ մտնում էր նրա մօտ և հարցնում.

—Ի՞նչ լինեցիք։

—Դեռ ոչինչ... լինում էր Միքայէլի սովորական պատասխանը։

Մի գիշեր գրում էր նա այս երկար նամակը Ստեփանին։

«Ես գտայ ձեր հօր գործերը այն դրութեան մէջ որպէս նախագուշակում էիք։ Խանութները համարեա դատարկված էին, և այն ապրանքները, որոնք փոքր ի շատէ արժէք ունէին, յափշտակված էին Գիտէք ում ձեռքով.—ձեր հօր հաւատարիմների գործակատարների ձեռքով։ Աղայի յանկարծակի մահը հնար էր տուել այդ աւազակներին կատարել իրանց փափագը, իսկ տեղական վարչութեան անհոգութիւնը աւելի դիւրութիւն էր ընծայել յափշտակութեան գործին։

«Ես ոչ ոքի չեմ մեղադրում։ «Խելացի մարդը կը գողանայ», ասում էր ինձ յաճախ հանգուցեալ աղան, և գողութիւնը ընդունում էր որպէս զբաղխաւոր պայման կեանքի մէջ։ Եւ այս մտքով նա պատրաստեց իր ձեռքի տակ եղող մարդերից կատարեալ գողեր, վարժված և փորձված գողեր, բայց չէր հասկանում ողորմելին, որ այն զէնքը, որ նա պատրաստում էր օտարների համար, մի օր աւելի սարսափելի կերպով կը դառնար դէպի ինքը....

«Ես պէտք է հանդիպէի շատ արդելքների, մինչև կարողանայի ուղղել և կարգի դնել ձեր հօր աւերված գործերը։ Ամեն ինչ այնպէս խճճված է, ամեն բանի մէջ այնպիսի անլուծանելի հանգոյցներ են գցել, որ հաւիւ թէ կարելի էր բաց անել։ Եւ դժուարին այն է, որ այս բոլորի հետ կապված են այնպիսի քրէական յանցանքներ, որ եթէ պարզվելու լինէին կատարված չարագործութիւնները, շատերը պէտք է ճանապարհ դրվէին դէպի Սիբիր, որը կարծեմ, ոչ ձեզ և ոչ ինձ հաճելի կը լինէր։

«Երևակայեցէք մի այսպիսի խաբէութիւն. ձեր հայրը իր կենդանութեան ժամանակ ունէր մի փաստաբան (դուք չէք ճանաչում այդ անպիտանին) մի մարդ, ինչպէս ասում են, որ ամեն ծակ մտել և դուրս էր եկել, մի «չաթ ուքէսան», որ իր կեանքի մեծ մասը փտեցրել ու մաշել էր ստոր ծառայութիւնների մէջ, ուր յաճախ գործվում են անիրաւութիւններ, ուր ծառայողը, որքան էլ ազնիւ լինէր, չէր կարող չը սովորել զանազան տեսակ խաբէութիւններ։ Այդ մարդը ձեր հօր փաստաբանն էր, որ անխղճաբար կողոպտում էր նրա պարտականներին, իսկ աղայի մահից յետոյ, խելքից հանելով ձեր միամիտ մօրը, դառնում է նրա և ձեր քոյրերի կողմից հաւատարմատար, այլ և խնամակալ անչափահաս աղջիկների վրա։ Ոչխարի հօտը յանձնվում է գայլի ձեռքը։ Այնուհետև այս աւազակը, միանալով գործակատարների հետ, կատարում են ձեր հօր կայքի վերաբերութեամբ անկարագրելի անիրաւութիւններ։

«Մի փոքրիկ գաղափար տալու համար գործված չարութիւնների մասին, բաւական է յիշել մի քանի փաստեր. շատ մարդկանց ձեռքում երևում են կեղծ պարտամուրհակներ, իբր թէ ձեր հօրից տուած, որոնցով պարտաւորվում է նա վճարել բաւական խոշոր գումարներ այս և այն անձանց։ Ինձ յայտնի է, որ հանդուցեալ աղան փողի կարօտութիւն չունէր և ոչ ոքից պարտքով փող չէր առնում։ Բայց որտեղից յայտնվեցան այդ պարտամուրհակները։ Այդ բոլորը չինել և սարքել էին գործակատարները. նրանցից ամեն մէկը գիտէր իր ձեռագիրը ձեր հօր ստորագրութեանը նմանեցնել։ Ձեզ յայտնի է, որ հանդուցեալ աղան անգրագէտ մարդ էր, և բացի իր անունը ստորագրելուց, ուրիշ ոչինչ չը գիտէր, իսկ անգրագէտ մարդու ստորագրութեանը նմանեցնել՝ շատ հեշտ է։ Բանն այն է, որ յիշեալ պարտամուրհակները ներկայացրել են դատարանը պահանջման համար, և որքերի խնամակալը, և մի և նոյն ժամանակ ձեր մօր փաստաբանն ու հաւատարմատարը հաստատել է կեղծ պարտամուրհակների վաւերականութիւնը։

«Քրքրել այս բոլորը և երևան հանել գործված անիրաւութիւնները, որքան դժուար են, այնքան էլ հեշտ են, միայն որպէս յիշեցի վերևում, գործերի հետ կապված են մեծ քրէական յանցանքներ, որ շատերի կորստեան պատճառ կը լինեն։ Ես թողում եմ ձեր վճռին, և կը սպասեմ ձեր հրահանգներին։

«Ես դեռ յիշում եմ այն խօսքերը, որ ինձ ասեցիք Մոսկվայում, «հեղեղի բերածը էլի հեղեղը կը տանէ»....Այսպէս էլ եղել է։ Հանդուցեալը իր հարստութիւնը այնպիսի անհաստատ և խարխուլ հիմքերի վրա էր դրած, որ ուրիշ կերպ սպասել չէր կարելի. պէտք է նրա մահից յետոյ ամեն ինչ ոչնչանար, և ամեն ինչ ցնվէր օդի մէջ....Ձեր մայրը ոչ մի գործից տեղեկութիւն չունի. նա, որ իր ամուսնի մահից յետոյ պէտք է տէր լինէր և պէտք է պահպանէր նրա թողած ժառանգութիւնը, իր անփորձութիւնից, իր տգիտութիւնից, մատնել է բոլորը գաղտնների բերանը։ Եւ ինչով է մեղաւոր նա։ Կինը, որ իր ամուսնի կենդանութեան ժամանակ նրա ընկերը և գործակիցը չէ համարվում, որին փակում են տան չորս պատերի մէջ, որը չը գիտէ, թէ ինչ է չինում իր մարդը դրսում,— երբ հանում է վերջինի մահը, շատ հասկանալի է, որ ամեն ինչ կը մնայ օտարների ձեռքում։ Ձեր հայրը ինքն էր պատրաստել իր կործանումը....Գոնէ մնացած լինէին օրինաւոր հաշուէտուներ, այդ էլ չը կայ, և եղածները մէջտեղից առնված են....»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՐՕՈԻԼԱՆԴ ՀԻԼԼ

—

Ներկայ տարվայ օգոստոսի 15-ին Լօնդոնում վախճանվեցաւ մարդկութեան այն մեծ բարերարներից մէկը, որոնց հասարակական ներկայ սերունդը պարտական է այն անհամեմատ գերազանցութիւններով, որոնցով նա զանազանվում է հին սերունդներից։ Այս տեսակ մարդոց խմբի մէջ սիր Ռօուլանդ Հիլլ, երկաթուղու և էլեկտրական հեռագրի հնարողներից յետոյ, գրեթէ առաջին տեղն էր բռնում. գոնէ հաստատ կարելի է ասել, որ միջազգային յարաբերութիւնների զարգացման համար նա նոյնքան արաւ, որքան և այդ վերոյիշեալ գիւտերի հնարողները։ Նա հնարեց փոստային արժան յարաբերութիւնները և փոստային գների միակերպ ցանկը։

Մեզնից շատերին, մանաւանդ Ռուսաստանում, շատ լաւ յայտնի են դեռ փոստային յարաբերութիւնների նախկին կարգադրութիւնները, որոնց շնորհիւ նամակների յաճախ ուղարկելը մի որոշեալ հեռաւորութեամբ գտնված տեղ, զգալի ծախսերի էր ենթարկում այնպիսի մարդկերանց համեստ բիւդժէտը, որոնք առանց այդ էլ մի առանձին մեծ հարստութիւն չունեն։ Այս տեսակ կարգադրութիւնները սկզբից այնպէս էին երևում թէ նրանք հիմնված են այնպիսի հաստատ ըսկզբունքների վրա, որոնց մաթեմատիկական ճշդութիւնը ոչինչ վերանորոգութեան չէր կարելի ենթարկել։ Նամակ ուղարկելու համար համեմատաբար վճարվում էր այնքան, որքան հեռաւորութիւն, որ պէտք է գնար նամակը հասնելու այն անձի ձեռքը, որին նա ուղղված էր։ Այն ժամանակները փոստային ծրարների (посылка) ճանապարհորդութիւնը կատարվում էր նոյն անտեսա-խնայողական պայմաններով, որոնցով մինչև այժմ էլ կատարվում է ամեն մի անձնաւորութեան ճանապարհորդութիւնը։

Այդ պայմանները ըստ երևոյթին անկարելի էր փոփոխութեան ենթարկել։ Փոստայով ուղարկված նամակի կամ ծրարի ճանապարհորդութիւնն էլ մի և նոյն միջոցներով է կատարվում ինչ միջոցներով և կատարվում է մի որ և է անհատի կամ ապրանքի ճանապարհորդութիւնը։ Փոխադրութեան յարաբերութիւնների վերանորոգութիւնն ըստ երևոյթին կարող էր միայն արժանացնել փոխադրվելի առարկաների գները. բայց այդ վերանորոգութիւնը երբէք չը պէտք է վնասէր այն օրէնքին, որի հիման վրա վճարվում է այնքան գին, որքան պահանջում է տեղի հեռաւորութիւնը, ուր պէտք է հասնի ապրանքը, ուրեմն վճարը պէտք է լինի տեղի հեռաւորութեան համեմատ։ Շնորհիւ երկաթուղիների մենք Փարիզ կամ Բերլին գնալու համար գրեթէ տասն անգամ աւելի արժան ենք վճարում քան թէ առաջ, բայց և այնպէս մենք Փարիզ գնալու համար գրեթէ երկու անգամ աւելի ենք վճարում, քան եթէ մենք ցանկանայինք Բերլին գնալ։ Նամակները և փոստային ծրարները մեզ հետ ճանապարհորդում են մի և նոյն շոգենաւերի, մի և նոյն վագոնների մէջ և բոլորովին մի և նոյն պայմանների մէջ, ինչպէս և մենք. և կարծես, որ ոչինչ պատճառ չը կայ որ տարածութեան հեռաւորութիւնը կամ մօտաւորութիւնը նրանց վրա մի և նոյն ազդեցութիւնը չունենան, ինչ

ինչ ոչ ոքի չեմ մեղադրում։ «Խելացի մարդը կը գողանայ», ասում էր ինձ յաճախ հանգուցեալ աղան, և գողութիւնը ընդունում էր որպէս զբաղխաւոր պայման կեանքի մէջ։ Եւ այս մտքով նա պատրաստեց իր ձեռքի տակ եղող մարդերից կատարեալ գողեր, վարժված և փորձված գողեր, բայց չէր հասկանում ողորմելին, որ այն զէնքը, որ նա պատրաստում էր օտարների համար, մի օր աւելի սարսափելի կերպով կը դառնար դէպի ինքը....

«Ես պէտք է հանդիպէի շատ արդելքների, մինչև կարողանայի ուղղել և կարգի դնել ձեր հօր աւերված գործերը։ Ամեն ինչ այնպէս խճճված է, ամեն բանի մէջ այնպիսի անլուծանելի հանգոյցներ են գցել, որ հաւիւ թէ կարելի էր բաց անել։ Եւ դժուարին այն է, որ այս բոլորի հետ կապված են այնպիսի քրէական յանցանքներ, որ եթէ պարզվելու լինէին կատարված չարագործութիւնները, շատերը պէտք է ճանապարհ դրվէին դէպի Սիբիր, որը կարծեմ, ոչ ձեզ և ոչ ինձ հաճելի կը լինէր։

«Երևակայեցէք մի այսպիսի խաբէութիւն. ձեր հայրը իր կենդանութեան ժամանակ ունէր մի փաստաբան (դուք չէք ճանաչում այդ անպիտանին) մի մարդ, ինչպէս ասում են, որ ամեն ծակ մտել և դուրս էր եկել, մի «չաթ ուքէսան», որ իր կեանքի մեծ մասը փտեցրել ու մաշել էր ստոր ծառայութիւնների մէջ, ուր յաճախ գործվում են անիրաւութիւններ, ուր ծառայողը, որքան էլ ազնիւ լինէր, չէր կարող չը սովորել զանազան տեսակ խաբէութիւններ։ Այդ մարդը ձեր հօր փաստաբանն էր, որ անխղճաբար կողոպտում էր նրա պարտականներին, իսկ աղայի մահից յետոյ, խելքից հանելով ձեր միամիտ մօրը, դառնում է նրա և ձեր քոյրերի կողմից հաւատարմատար, այլ և խնամակալ անչափահաս աղջիկների վրա։ Ոչխարի հօտը յանձնվում է գայլի ձեռքը։ Այնուհետև այս աւազակը, միանալով գործակատարների հետ, կատարում են ձեր հօր կայքի վերաբերութեամբ անկարագրելի անիրաւութիւններ։

«Մի փոքրիկ գաղափար տալու համար գործված չարութիւնների մասին, բաւական է յիշել մի քանի փաստեր. շատ մարդկանց ձեռքում երևում են կեղծ պարտամուրհակներ, իբր թէ ձեր հօրից տուած, որոնցով պարտաւորվում է նա վճարել բաւական խոշոր գումարներ այս և այն անձանց։ Ինձ յայտնի է, որ հանդուցեալ աղան փողի կարօտութիւն չունէր և ոչ ոքից պարտքով փող չէր առնում։ Բայց որտեղից յայտնվեցան այդ պարտամուրհակները։ Այդ բոլորը չինել և սարքել էին գործակատարները. նրանցից ամեն մէկը գիտէր իր ձեռագիրը ձեր հօր ստորագրութեանը նմանեցնել։ Ձեզ յայտնի է, որ հանդուցեալ աղան անգրագէտ մարդ էր, և բացի իր անունը ստորագրելուց, ուրիշ ոչինչ չը գիտէր, իսկ անգրագէտ մարդու ստորագրութեանը նմանեցնել՝ շատ հեշտ

Մոսկվայում, «հեղեղի բերածը էլի հեղեղը կը տանէ»....Այսպէս էլ եղել է։ Հանդուցեալը իր հարստութիւնը այնպիսի անհաստատ և խարխուլ հիմքերի վրա էր դրած, որ ուրիշ կերպ սպասել չէր կարելի. պէտք է նրա մահից յետոյ ամեն ինչ ոչնչանար, և ամեն ինչ ցնվէր օդի մէջ....Ձեր մայրը ոչ մի գործից տեղեկութիւն չունի. նա, որ իր ամուսնի մահից յետոյ պէտք է տէր լինէր և պէտք է պահպանէր նրա թողած ժառանգութիւնը, իր անփորձութիւնից, իր տգիտութիւնից, մատնել է բոլորը գաղտնների բերանը։ Եւ ինչով է մեղաւոր նա։ Կինը, որ իր ամուսնի կենդանութեան ժամանակ նրա ընկերը և գործակիցը չէ համարվում, որին փակում են տան չորս պատերի մէջ, որը չը գիտէ, թէ ինչ է չինում իր մարդը դրսում,— երբ հանում է վերջինի մահը, շատ հասկանալի է, որ ամեն ինչ կը մնայ օտարների ձեռքում։ Ձեր հայրը ինքն էր պատրաստել իր կործանումը....Գոնէ մնացած լինէին օրինաւոր հաշուէտուներ, այդ էլ չը կայ, և եղածները մէջտեղից առնված են....»

ազդեցութիւն որ նրանք ունեն մեր ճանապարհորդական բիւրժէսի վրա, բայց և այնպէս մեր օրով մենք տեսնում ենք մի բոլորովին հակառակ երևոյթ: Նամակը հարևան քաղաքն ուղարկելու համար նոյնքան արժէ, որչափ որ եթէ մենք նրան ովկիանոսի միւս ափը, օրինակ Նիւ-Յորկ ուղարկէինք. և բացի այդ նա մի այնպիսի ընչին գումար արժէ, որ նա հազիւ թէ զգալի լինէր նոյն իսկ ամենահամեստ գրպանի համար:

Այս բարերար վերանորոգութեամբ, որը այնպէս զգալի կերպով օգնեց միջազգային յարաբերութիւնների զարգացմանը, լուսաւորված աշխարհը ամբողջապէս պարտական է հանգուցեալ Բօուլանդ Հիլլին: Եթէ նահանգական փոքրիկ Կիդդերմինստեր քաղաքի ուսումնարանի անյայտ կառավարչի մտքում չը ծնվէր փոստային միակերպ տակսայի այս մինչև յանդգնութեան հասնող համարձակ ծրագիրը, այն ժամանակ մենք թերևս մինչև այժմ էլ դեռ շատ բնական համարէինք փոստային նախկին կարգադրութիւնները:

Բօուլանդ Հիլլ Կիդդերմինստէր քաղաքի բնակիչ Թովմաս-Բայտ Հիլլի երրորդ որդին էր: Նա ծնվեց 1795 թուի դեկտեմբերի 3-ին իր հայրենական տանը, որը պատկանում էր նրա նախորդներին մի քանի սերունդ շարունակ: Նրա հայրը կորցրեց բոլոր իր կարողութիւնը այն ֆինանսական կրիզիսի ժամանակ, որին ենթարկվեցաւ Անգլիան Ֆրանսիական հանրապետութեան դէմ մղած պատերազմի առիթով, և նրա ընտանիքը գտնվում էր գրեթէ աղքատ դրութեան մէջ: Փոքրութեան հասակից Բօուլանդին վիճակվեցաւ տանել ամենադժուար աղքատութիւն: Նրա հայրը նշանաւոր խելքի տէր մարդ էր. նա թէպէտ և ոչ այնպէս խոր, բայց բաւականին բազմակողմանի գիտութիւն ունէր, և սաստիկ ձեռներեց ու անդրդուելի ազնուութեան տէր մարդ էր: Նա բոլոր իր կեանքը անցկացրեց զանազան թէօրիաներ ստեղծելով, որոնց գործնական կեանքին վերածելու մասին նա երբէք չէր մտածում, և բաւականանում էր միայն այն համոզմունքով, որ իր թէօրիաները վերացականապէս ազնիւ են: Իր ժամանակի համար, նա ծայրայեղ ազատամտական էր. նա հերքում էր ստրկութեան օրէնքը, հակառակում էր այն ժամանակվայ անգլիական անմիտ օրէնքների դէմ, պահանջում էր խղճի կատարեալ ազատութիւն, և միշտ կուսակից էր առևտրական ազատութեան: Նա իր ընտանիքի անդամներին մի չը տեսնված և բոլորովին իր սկզբունքներին համաձայն դաստիարակութիւն տուեց. նա իր տղերանց և աղջկերանց այն ժամանակվայ մանկավարժական կանոններին համաձայն ուսում չը տուեց. դասերին փոխարինում էին խօսակցութիւններ, վիճաբանութիւններ և դատողութիւններ, որոնց միջոցին երեխայի բնական ընդունակութիւնները աճում ու զարգանում էին բնութեան և բնաւորութեան ցոյց տուած ճանապարհով:

Բօուլանդ Հիլլ շուտով մեծ ընդունակութիւններ ցոյց տուեց կազմակերպական գործունէութեան մէջ: Նրա հայրը կնոջ համոզմամբ, որը իրանից էլ աւելի գործնական էր, վերջապէս հրաժարվեց առևտրական գործունէութենից, որը նրան սաստիկ չէր յաջողում, և ուսումնարան բացեց: Ուսումը շատ յաջող էր գնում, բայց ուսումնարանի ֆինանսական գործերը շատ վատ էին: 12 տարեկան Բօուլանդը այլ ևս չը շարունակեց իր ուսումը և իր եղբայրների հետ միասին օգնական եղաւ հօրը: Շուտով նա իր յօժար կամքով յանձն առաւ գործի տնտեսական մասը, և այնպիսի ճարպիկութեամբ առաջ տարաւ գործը, որ մի քանի տարուց յետոյ նա վճարեց հօր բոլոր պարտքերը և վճռապէս ոտքի կանգնեցրեց այդ օտարոտի հիմնարկութիւնը, որի մէջ ամենայն համարձակութեամբ թէօրաները յարմարեցնվում էին գործնական կեանքին, և որի մէջ գործադրվում էր աշակերտական ինքնագատութիւն, (самосудъ) և ուր աշակերտները իրանք մասնակցում էին ուսումնական և մանկավարժական պրոգրամմների կազմակերպութեանը և այլն և այլն:

Երիտասարդ Բօուլանդ Հիլլի կառավարութեան ներքոյ Կիդդերմինստէրեան ուսումնարանը սկսեց հետզհետէ մեծ նշանակութիւն ստանալ. նա սաստիկ հռչակվեցաւ: Նրանով սաստիկ զբաղվեցաւ հռչակաւոր Բէնտամը. հետզհետէ նրան այցելեցին Ուիլբերֆօրս, Բրում, Գրոտէ, Ջօզէֆ, տիկին Էջիւօրդս և ուրիշ բազմաթիւ ժամանակակից նշանաւոր անձինք:

Բօուլանդ Հիլլ շարունակեց իր մանկավարժական գործունէութիւնը մինչև 30 տարեկան հասակը, և բոլոր այդ ժամանակ նա անդադար աշխատում էր աւելի ու աւելի ընդարձակել իր օտարոտի ուսումնարանական հիմնարկութիւնը և դրա համար նա քաղաքի զանազան թաղերում այդ ուսումնարանի նորանոր բաժանմունքներ էր բաց անում: Այն հսկայական աշխատութիւնները, որոնց վրա նա անխոնջութեամբ գործ էր դնում բոլոր իր եռանդը, վերջապէս վնասեցին նրա առողջութեանը մինչ այն աստիճան, որ նրան վերջապէս զգալի եղաւ հանգստութեան պահանջ: Յանձնելով ուսումնարանը իր փոքր եղբօրը—Արտուրին, նա սկսեց իր համար որոնել մի աւելի քիչ յոգնեցնող պարապմունք, և մտաւ Հարաւային Աւստրալիայի գաղթականութեան համար կազմված ընկերութեան մէջ քարտուղարի պաշտօնով:

(կը շարունակվի)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԲԵԼԳՐԱԴ, 3|15 սեպտեմբերի: Այստեղ մի քանի օրվայ համար սպասում են բոլգարական իշխանին:

ԿԱՆԴԱՀԱՐ, 3|15 սեպտեմբերի: Կաբուլի շրջականերից այստեղ հասած բարձր դասակարգին պատկանող մի աֆղանցի հաղորդում է, որ Եակուբ-խանը Հէրատից և Բալխից զօրքեր պահանջեց, բացի այդ նա Գիլզայեան ցեղերին Կաբուլ կանչեց, որպէս զի անգլիացիների դէմ սրբազան պատերազմ մղէ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 սեպտեմբերի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94⅝ ր., երկրորդ 93 ր. 50 կ., երրորդ 94 ր., չորրորդ 93⅜ ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 233 ր., երկրորդ 229 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ր., երկրորդ 92 ր., ոսկի 7 ր. 84 կ.: Ռուսաց 1 բուբլ Լօնդօնի վրա արժէ 25⅛ պէնս., ռուսաց 100 բուբլ Գերմանիայի վրա արժէ 214 մարկ 75 պֆ., Փարիզի վրա 265 ֆրանկ:

ԲԵՐԼԻՆ, 5/18 սեպտեմբերի: Երէկ երեկոյեան Կայսր Վիլհելմ վերադարձաւ Բերլին, նոյնպէս վերադարձաւ և ռուսաց դեսպան Ուբրին:

ԼՕՆԴՕՆ, 5/18 սեպտեմբերի: Մալաբար անունով նաւը երէկ Պորտսմուտից լողաց դէպի Բոմբայ. նրա վրա ուղևորվեցան 40 օֆիցերներ, որոնք Կուդէնստաունէից կը վերցնեն իրանց հետ 1,100 ունտէր-օֆիցերներ և հետևակ զինուորներ. սրանք բոլորն էլ նշանակված են զօրացնելու Աֆղանիստանի բրիտանական բանակը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 սեպտեմբերի: Սիրդարեան նահանգի զինուորական նահանգապետ Տրոցկին և Կովկասեան զինուորական շրջանի ինժենէրների գլխաւոր Ֆրոլովին շնորհված է Աննա առաջին աստիճանի շքանշանը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 սեպտեմբերի: Ներքին 2-որդ փոխառութեան տիրաժի ժամանակ, որ կատարվեցաւ սեպտեմբերի 1-ին, գլխաւոր վիճակները ընկան հետևեալ տոմսակներին:

№ սերի	№ տոմս	տարած գումար
705	48	200,000 ր.
15,260	9	75,000 „
1,465	7	40,000 „
15.140	11	25,000 „
9,249	48	
11,879	22	10,000 „
9,403	31	
8,256	22	
8,570	34	
8,947	42	8,000 „
176	19	
6,846	20	
11,123	39	
16,666	7	
94	16	5,000 „
19,687	50	
19,340	49	
15,877	26	
14,055	3	
15,121	14	
4,103	23	
14,650	35	
10,456	28	
19,012	20	
3,419	4	
19,145	15	
16,595	43	
5,762	41	
9,486	47	1,000 „
18,910	36	
10,412	36	
14,046	47	
13,336	42	
1,906	26	
1,905	24	
4,525	36	
7,089	25	
13,947	29	
9,479	16	
8,119	6	

Խմբագիր—հրատարակիչ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Քետոյ նկարագրում էր աղայի մահը, և նրա տեսիլքը «ոսկի աքաղաղի» մասին, և թէ այդ բախտաւորութեան և հարստութեան անեւեայթ պաշտպանից մնացել էր աղայի ձեռքում մի ոսկի փետուր միայն....

Եւ համեմատելով այդ տեսիլքի երազական ալեգորիան իրականութեան հետ, նամակագիրը աւելացնում էր.—«ոսկի աքաղաղից» մնաց ձեր հօր ձեռքում մի ոսկէ փետուր միայն...այնպէս է «ոսկի աքաղաղի» արտադրած հարստութիւնից կը մնայ նրա ժառանգների ձեռքում մի փոքրիկ մասը միայն....Բայց ինչ էր իսկապէս այդ «ոսկի աքաղաղը», որ իշխում էր ձեր ընտանիքի բախտաւորութեան վրա, որ իր բարերար ազդեցութեամբ յաջողեցնում էր ձեր հօր գործերը,—ուրիշ ոչինչ, բայց միայն խաբէյութիւնը, խորամանկութիւնը, խարդախութիւնը, անազնուութիւնը, և այլ անբարոյական յատկութիւններ, որոնք մարմնացած, և մի անեւեայթ ոգու կերպարանք ստացած, տիրում էին գործերի վրա....Մեռաւ հմուտ գործադրողը, նորա հետ և մեռաւ «ոսկի աքաղաղը»....Ես այսպէս եմ բացատրում ձեր տոհմային հին աւանդութեան իմաստը, թող մահաւատները այլապէս մտածեն»:

Իր նամակի վերջում Միքայէլը տեղեկութիւն էր տալիս Ստեփանի մօր և քոյրերի մասին, և երկար խօսում էր Հռիփսիմէի մասին, թէ որքան գեղեցկացել էր նա և որքան հնարհալի աղջիկ էր դարձել և այլն:

Նամակը կնքում էր նա, երբ ներս մտաւ տ. Մարիամը. նա տխուր դէմքով եկաւ, նստեց Միքայէլի մօտ:

—Գրեցիք Ստեփանին, որ շուտ գայ, չուշանայ, հարցրեց նա:

—Իմ գրելը աւելորդ էր, նա կը գայ, երբ իր գործերը կը վերջացնէ, պատասխանեց Միքայէլը:

—Ա՛խ, ինչ կը լինի մեր վերջը մինչև նրա գալը...

—Ես կարծում եմ, որ շատ լաւ կը լինի, Ստեփանը ինքը ձեզ համար մի մեծ հարստութիւն է, ուրիշ ինչ էք ուզում. բախտաւորութիւն է այնպիսի որդի ունենալ:

—Ես ձեր խօսքերին հաւատում եմ, պատասխանեց տիկինը մի փոքր մխիթարվելով.—ես կը ցանկանայի աղքատ լինել, օրական հացի կարօտ լինել, միայն նա լինի մօտ գտնվէր...ես վախենում եմ մեռնել առանց նրան տեսնելու....

—Կը տեսնէք, շուտով կը տեսնէք, տիկին, նա ձեզ կարօտ չի թողնի:

—Մեր մասին ինչ գրեցիք...

—Շատ բան գրեցի....ամեն ինչ գրեցի....

—Գրեցիք, որ «ոսկի աքաղաղը» մեռաւ:

—Գրեցի...

—Ա՛խ, այդ ինչ դժբախտութիւն էր...հառաչելով կոչեց տիկինը, և թաշկինակը սեղմեց աչքերին:

—Բայց Ստեփանը մի նոր բախտ, մի նոր «ոսկի աքաղաղ» կը ստեղծէ ձեզ համար, որը այն չի լինի, ինչ որ էր առաջ.... պատասխանեց Միքայէլը:

Տիկինը ուրախացած դուրս գնաց:

Այն օրից, որ եկել էր Միքայէլը, Գայիանէն և Հռիփսիմէն միանգամ ևս առիթ չէին ունեցել տեսնվելու և խօսելու նրա հետ. երբեմն հեռուից միայն տեսնում էին, բայց հէնց որ նա մօտենում էր, նրանք փախչում, մտնում էին իրանց սենեակը: Միքայէլը չէր զարմանում այդ օտարոտի վարմունքի վրա, որովհետև իր երկրի սովորութիւնն իրան վաղուց յայտնի էր: Տարիներով միասին ապրած, միասին մեծացած, երկու քոյրերն և ընտանեցած Միքայէլը այժմ այն աստիճան խորթացել և օտարացել էին, որ չէին կամենում ճանաչել միմեանց: Իսկ այդ խորթութիւնը առաջ չէր գալիս Միքայէլի մի քանի տարվայ բացակայութիւնից, այլ նրանից, որ նա այժմ բաւական աճել և չափահաս էր դարձել, և երկու աղջիկներն ևս զգանվում էին այն հասակում, որ նրանց այժմ անպատշաճ էր թողնել օտար տղամարդի մօտ: Եւ այս պատճառով, հէնց առաջին օրը, երբ և կաւ Միքայէլը, նրանց մայրը պատուիրեց աղջիկներին:

—Գիտէք ինչ կայ, թէև Միքայէլը ձեր եղբօր տեղն է, բայց հիմայ դուք մեծ աղջիկներ էք դարձել, ձեր հասակում ամօթ է, որ աղջիկը մեծ տղի հետ խօսէ:

Երկու քոյրերը մի քանի օր պահեցին յիշեալ պատուէրը, բայց յետոյ նրանց մէջ սկսվեցաւ մի այսպիսի իրաւակցութիւն, որ շատ նման էր բողոքի:

—Գիտես, Գայիանէ, այսօր Միքայէլը գալիս էր դրսից, ես կանգնած էի փողոցի դրան մօտ, դուռը զարկեց, ես բաց արի, «բարով Հռիփսիմէ», ասաց ինձ ժպտելով, բայց ես ոչինչ չը պատասխանեցի: Նա գլուխը քարշ գցեց և անցկացաւ, գնաց իր սենեակը: Ցետոյ ես այնքան ամաչեցի, այնքան ամաչեցի...ախ, հիմայ ինչ կը մտածէ նա. չի ասի այս աղջիկը խստակ յիմար է:

—Չի ասի, պատասխանեց Գայիանէն սառնութեամբ.—նա մեր երկրի սովորութիւնն լաւ է իմանում:

—Ի՞նչ սովորութիւն, հարցրեց Հռիփսիմէն մի փոքր զայրացած կերպով.—մի՞թէ Միքայէլը մեզ համար օտար է, ինչու չը պէտք է խօսենք նրա հետ:

—Օտար չէ, Հռիփսիմէ, քոյրիկ, բայց ինչ կասեն ուրիշները:

—Ի՞նչ պիտի ասեն, ով ինչ գործ ունի, եթէ մենք մեր տան մէջ կը խօսենք մեր տան տղի հետ:

Գայիանէն նկատելով քրոջ վրդովմունքը, որ առաջ էր եկել այն օրվայ Միքայէլի հետ հանդիպելուց, իր խօսքերի մէջ ընդունեց աւելի խրատական ձև, պատասխանելով.

—Ճշմարիտ է, մենք մեր տան մէջ ում հետ որ խօսելու լինենք, այդ ոչ ոքի չէ վերաբերում, բայց դու չես իմանում, որ տան պատերն էլ ականջ ունեն, ինչ որ լսեն, խաբարը, որտեղ ասես, կը տանեն:

—Հա թող տանեն, ինչ կայ:

—Այն ժամանակ մեր անունը կը կոտրվի, հազար տեսակ բամբասանքներ կը շարադրեն մեր մասին:

—Ախար Միքայէլը մեր եղբօր տեղն է:

—Հա թող լինի, օտար հօր որդի է:

—Ուզիղն ասեմ քեզ, Գայիանէ, ես շատ եմ ուզում, որ խօսեմ Միքայէլի հետ. տեսնում ես, ինչ շնորքով տղայ է դարձել:

—Տեսնում եմ...պատասխանեց Գայիանէն խորհրդաւոր ձայնով:

—Ես կարծում եմ նրա հատը չը կայ մեր քաղաքում:

—Չը կայ...

Այս խօսակցութեան միջոցին վրա հասաւ նրանց մայրը և երկու քոյրերը իսկոյն լռեցին:

(կը շարունակվի)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍԱԼԻՑԵԼԵԱՆ ԱՏԱՄԻ ԲԺՇԿԵԼՈՒ ՄԻԶՈՑՆԵՐ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ ԲԺԻՇԿ Լ. Լ. ԼԻԴԵԼԻՑԻՄԻ *թոյլ են տուած* **Մոսկվայի ԲԻՀԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻՑ:** *Այդ միջոցները* **մեծ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՆ** *գտել և առաջարկվում են իբրև* **ԱՄԵՆԱԼԱՒ** *առողջապահական* **ՄԻԶՈՑՆԵՐ** *բերանի և ատամների համար:* **Կարելի է ԱՏԱՄՆԵՐԸ** *պահպանել* **ՓՕՇԻՆԱԼՈՒՑ,** *տառեցնում են* **ԼՕՐՋՈՒՆԻ ՔԱՐԸ** *և* **վատ ՀՈՏԻ** *առաջն են առնում:*

Ատամնաբոյժ բժիշկ Ա. Լ. Աղելգէյմի ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏԸ *գտնվում է* **ՄՈՍԿՎԱՅՈՒՄ, ԿՈՒԶՆԵՑԿԻ ԿԱՄՈՒՐՋ, ՍՕԿՈԼՈՎԻ** *տանը:*

ԹԻՖԼԻՍՈՒՄ *կարելի է գտնել* **Ա. Մ. ՑՈՒՐԻՆՈՎԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ** *և* **անդրկովկասեան գլխաւոր ՊԱՀԵՍՏՈՒՄ:** *Ծախողների* **ՆՀԱՆԱՒՈՐ ՕԳՆՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ:**

ԶԻՒԹԱՑԻՆ ՊԱՏԻՃՆԵՐ

ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ՄԱՔՐԸՆԾ ԶԻՒԹԻՑ, *որ պատրաստված է Մոսկվայի դեղագործ:*

ԳԻՐՇՖԷԼԴՏԻՑ

Գիւոյի Ֆրանսիական յայտնի պատիճների անհամեմատ թանգ գները դրդեցին ինձ պարապել նրանց արդիւնագործութեամբ և որովհետև պատիճների պատրաստելը գաղտնիք չէ և նրանք իրանց մէջ ոչինչ չեն պարունակում, բացի մաքուր Զիւթից, ես առաջարկում եմ իմ շատ լաւ պատրաստված պատիճները **ՖՐԱՆՍԻԱԿԱՆ (ԳԻՒՕՅԻ) ՊԱՏԻՃՆԵՐԻՑ** 40% *էժան:*

Յոյս ունեմ, որ ռուս բժիշկները և հասարակութիւնը խելացի կերպով կը վերաբերվեն դէպի իմ աշխատանքը, որովհետև նոքա առիթ չունեն ռուսաց փողերով պահպանել **ԱՐՏԱՀԱՄԱՆԵԱՆ ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ:**

Ծախելու տեղերը. Ռուսաստանի բոլոր դեղատունները և տեղական պահեստները: Գլխաւոր պահեստները. Մոսկվայում, Լուբեանկի դեղատուն Աա. Ի. Գիրշֆելդտի և Ր. Կեօլեր և ընկ. Նիկոլսկիի վրա: Թիֆլիսում Յուրինովի և Բոստոմովի դեղատուն:

4—25

Մեր Ազգային դպրոցների Մեծապատիւ տեսուչներին և նոցա օգնականներին

«Ռուսին մայրենի լեզուի» վերնագրով Այբենարանիս չորրորդ տպագրութիւնն սկսելուց առաջ ուզում եմ իմանալ ձեր նկատողութիւնները այդ գրքույկի մասին: Եթէ կարևոր համարէք ինչ ինչ փոփոխութիւնների ենթարկել, յաւելուածներ և յապաւումներ անել, ես յօժարութեամբ կը կատարեմ առանց դիպչելու բուն սկզբունքին:

Այդ գիրքն է ընդունուած մեր ազգային գլխաւոր դպրոցներում՝ Թիֆլիսի Ներսիսեան և Գայեանեան դպրոցներում. Երևանայ Թեմական դպրանոցում, Ալէքսանդրապօլու տղայոց և օրիորդաց դպրոցներում, Ղարաբաղու Հոգևոր սեմինարիայում և Թեմի դպրոցներում: Ինձ յայտնի չէ միայն միւս մանր դպրոցներից որոնցում է ընդունուած: Սակայն ես այս ընդունելութենից ազատութեամբ շահուելու բաղձանք չունեմ, իմ միակ շահն կը լիներ այն, որ դա իւր եղանակով, բովանդակութեամբ և գնովը համապատասխանէր այդ ընդունելութեանը, իսկ այդ վեր է միակ մի հոգու ուժից, պէտք են բարդապէս և ընկերսիրաբար օգնողներ, ահա այդ օգնութիւնն եմ ես խոնարհաբար խնդրում ձեզանից: Իմ հասցէն—Շուշի, Ղազարոս Աղայեանցին:

3—3

Շուտով կը մտնի մամուլի տակ մի գիրք, «Ձեռնարկ Գիւղատնտեսութեան» անունով որ կը լինի վեց զանազան մասերի բաժանված:

Յանկացողներից խնդրում ենք բաժանորդագրվել առաջուց, որպէս զի կարողանանք տպագրական ծախսերը հոգալ: Գրքի արժողութիւնն է 50 կ., կը վաճառվի Հայաստանում բացվող նոր ուսումնարանների օգտի համար: Սատրաքրութիւնները ընդունվում են պ. Զաքարեայ Գրիգորեանցի գրախանութում, Միխայլովսկի կամուրջի մօտ, և նախկին Իվանովի գրադարանում, Արծրունու գայլերիյում:

3—3 Վահան Բօտինեան

Խնդրում եմ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵԹԻ ԹԵՄԻ հայոց հոգևոր ուսումնարանների ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ հաղորդել ինձ թէ ինչ առարկաների ՈՒՍՈՒՑՉԻ ԿԱՐՕՏՈՒԹԻՒՆ ունեն, ուղարկելով մի և նոյն ժամանակ իրանց յանձնված ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՇՏԱՏԸ:

Թեմական Վերատեսուչ
ԳԷՈՐԳ ԲԱՐԹՈՒԴԱՐԵԱՆՑ:

6—10

Մի անձն, որ կանանց գլխազարդի ՈՒԹԵՐՈՐԴ դասատան ՎԿԱՅԱԿԱՆ ունի և գիտէ ՖՐԱՆՍԻՍԵՐԷՆ և ԳԵՐՄԱՆԵՐԷՆ, դասեր է փնտռում: Նոյնպէս իր տանը դասեր է տալիս չափաւոր վարձատրութեամբ: Կամենդանտսկայա փողոց, տուն № 23:

1—3 (2)

ԾԱԽՎՈՒՄ Է ԵՐԵՒԱՆՈՒՄ «ԳՈՒՐԶԻ» անուանված քարվանսարան, որ ունի 116 ԴՈՒՌԱՆ, 2 ՄԵԾ ՄԱԳԱԶԻՆ պահեստի համար, 2 ԱԽՈՒԱՆՈՑ, 2 ՍԵՆԵԱԿՆԵՐ խոհանոցով և ՄԵԾ ԱՒԱԶԱՆ մշտական ջրով: Սորա հետ ունի նմանապէս ԴԱՏԱՐԿ ՏԵՂ 4000 քառակուսի սաժէն: Յանկացողները ՊԱՅՄԱՆՆԵՐԻ մասին կարող են դիմել Պ. ԲԱՂԴԱՍԱՐ ԽՈՍՐՈՎԵԱՆՑԻՆ, Թիֆլիսում, Գանովսկայա փողոցի վրա, ՍԵՓԱԿԱՆ ՏԱՆԸ:

3—20 (2)

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

և

Տարրական Ուսումնարան

—

Աշակերտների և աշակերտուհիների ընդունելութիւնը և քննութիւնները կը սկսվեն օգոստոսի 21-ին, իսկ ուսումը կը սկսվի սեպտեմբերի 5-ին 1879 թ:

Մանկական Պարտէզում ընդունվում են երկու սեռի մանուկներ 4-ից մինչև 7 տարեկան հասակը, իսկ ուսումնարանում ընդունվում են 7-ից մինչև 14 տարեկան հասակը:

Ուսման ընթացքը այնպէս է յարմարեցրած, որ Ուսումնարանում թէ աղջիկ և թէ տղայ աւարտողները կարող են գիմնազիանների 1 և 2-րորդ դասատունները մտնել:

Սօլոլակի, Վելիամինովսկայա փողոց, Իշխ. Ամատունու տուն, № 11. 4—4

ԹԻՖԼԻՍ 1879

ՏԵՂԵԿԱՑՈՒՑՑ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Սեպտեմբերի 6-ին)	Ր.	Կ.
Ոսկին (պօլուիմպերիալը)	8	17
Չին 84 պր. մ. արծ. 1000 մ.	1470	—
Չին 20 կ. 72 պր. 1000 »	1250	—
Վիդրիչնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	238	—
Երկրորդ 5% Վիդրիչնի »	237	—
Մարսելի կուրսը 269—	100	—
Լօնդօնի կուրսը Օղեայի վրա	9	40
Վենայի կուրսը արժէ 121 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը	4	80
Առևտրական բանկի ակցիան 200 մ.	310	—
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	—	—
Շաքարը բրօցկու	7	15
» միւս տեսակը	7	
» չաքար աւազը	5	30
» տրանզիտը	5	10
» մաքսը վճառած	10	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից	8	—
Միւս տեսակը հին սերմից	7	40
Բուրդը թուշի	7	50
» թարաքամի	4	—
Աւլիւրը Շորագալու	2	20
» Երևանի	—	—
Գարին	1	40
Մոմը բնաճարպի (стеар.)	12	40
Մետաքսը Նուխվայ	180	—
Կախեթունը	140	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	50	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	65	—
Կօֆէն մօկօի	26	—
« լիւանի	22	—
« Մանտինիյան	18	—

ՀԵՌԱԳԻՐ	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները	1	
Ռուսաստան	2	
Աւստրիա	3	
Անգլիա	4	
Գերմանիա	2	88
Ֆրանսիա	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծնողականների ընդունելութիւնը ցերեկվայ գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ: Առանձին սենեակներում ամիսը 30—50 ռուբլ: Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական:

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան, Բժշկապետ Անանով:

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան: Մինչև Միխայլօվո (խուռն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ:

	առաւօտ.	երեկոյեան.
Թիֆլիսից	9. 21	5. 18
Գօրի	11. 58	9. 43
Միխայլօվո.	1. 29	11. 59
Ռիոն.	6. 47	
Փօթի	9. 40	

	առաւօտ.	
Փօթիից.	9. 13	
Ռիոն.	12. 13	
Միխայլօվո.	5. 39	1. 37
Գօրի	7. 5	4. 8
Թիֆլիս.	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գնացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

ՏԵՂԵՐԻ ԳԻՆԸ՝ ԹԻՖԼԻՍԻՑ

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ.	90	68	38
Գօրի	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Ռիոն	9.	6. 75	3. 75
Փօթի.	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փօստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7: Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան:

Ռուսաստանից և Արտասահմանից փօստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր: Բագուի տրակտից՝ երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր: Նուխու տրակտից չորեքշաբթի և կիրակի: Բելիկլիչի տրակտից երեքշաբթի և շաբաթ:

ՆԱՄԱԿՆԵՐ	կոպ.
Բաց նամակ արժէ	2
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	7
Ամերիկա	7
Պարսկաստան	7
Հնդկաստան	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտեան 8-ից մինչև 10 ժամը:

Երկուշաբթի. Լիսիցեվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւնների:

Երեքշաբթի. Վերմիչեվ ներքին հ., Բէյլ աչքի հ., Ժուրավլէվ կաշու և վեներական հ., Բաբով կրծքի և ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և մանկական հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Բաբաեվ ջղային և հոգեկան հ.:

Հինգշաբթի. Վերմիչեվ ներքին հ., Ժուրավլէվ կաշու և, վեներական հ.:

Ուրբաթ. Լիսիցեվ ներքին հ., Բաբով կրծքային և ներքին հ., Բաբաեվ հոգեկան հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և մանկական հ.:

Շաբաթ. Վերմիչեվ ներքին հ., Բէյլ աչքի հ., Ժուրավլէվ կաշու և վեներական հ.:

Օրբէլա, ատամի հ., ընդունում է իր տանը ամեն ժամանակ խեղճ հիւանդներին բժշկանոցի տոմսակով:

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԱԽԱԼՑԽԱ. ***. Հանգուցեալը մի նշանաւոր մարդ չէ, որ նրա գործունէութիւնը քննում էք:

—ԱՍՏՐԱԽԱՆ. ***. Նամակը կը տպենք հետևեալ համարներից մէկում:

—ԵՐԵՒԱՆ. Օր. Ե. Ա. «Մշակ» վաղուց ձեզ ուղարկվում է Երևան: Հարցրէք փօստատանը:

—ԵՐԵՒԱՆ. Ց. Հ. Ձեր վերջին նամակը չենք տպի: Երկու անձնաւորութիւններն էլ որոնցից մէկին դուք գովում էք, միւսին պախարակում, մեզ շատ լաւ յայտնի են: Եթէ կամենում էք շարունակել ձեր թղթակցութիւնները, պէտք է անկողմնապահ լինէք: Եթէ մի անգամ էլ այդպիսի անիրաւացի նամակ ստանանք, այնուհետև ձեր թղթակցութիւնները առանց կարդալու զամբիւղը կը գցենք:

Дозволено Цензурою 6 Сентября 1879 г. Тифлисъ.
Տպարան Ա. Ա. Միխելսոնի
Типографія А. А. Михельсона